ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎՈՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ ՄԱՄԻԿՈՆԻ

# ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ, ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
(1903-1914 թթ.)

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Գ. Թունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., դոցենտ Ս. Մ. Ստեփանյանց

պ.գ.թ. Հ. Ի. Գրիգորյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թականի հուլիսի 13-ին, ժամը $13^{00}$-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4, 11-րդ հարկ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունիսի 12-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ պ.գ.թ. Մ. Հ. Ղահրիիյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

***Թեմայի արդիականությունը:*** Կրոնական քաղաքականության պատմության ուսումնասիրությունը ներկայումս ունի ինչպես գիտական, այնպես էլ կիրառական կարևոր նշանակություն: Խորհրդային Միության փլուզումը արմատական փոփոխությունների ենթարկեց նախկին խորհրդային հանրապետությունների պետական և քաղաքական համակարգը: Այդ փոփոխությունները շոշափելի ազդեցություն ունեցան նաև եկեղեցա-պետական հարաբերությունների վրա: Հետխորհրդային երկրներում ձևավորվեց կրոնական նոր իրադրություն, որը բնութագրվում է եկեղեցա-պետական հարաբերությունների կանոնավորությամբ, կրոնի դերի շեշտակի բարձրացմամբ: Աճեց կրոնական գործոնի դերը պետության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ:

Խորհրդային հասարակարգի փլուզումը նկատելի ազդեցություն ունեցավ նաև հասարակական գիտակցության վրա: Բարձրացավ կրոնի դերը և նշանակությունը հասարակական-քաղաքական հարաբերությունների վրա: Կրոնի դավանման ազատությունը իրավական ձևակերպում ստացավ: Դա նպաստեց կրոնական նոր համայնքների ի հայտ գալուն, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների գործունեության ակտիվացմանը: Նման պայմաններում կրոնական հանդուրժողականության սահմանումը հանդիսացավ սոցիալական և քաղաքական կայունության երաշխիքներից մեկը: Հետևաբար կրոնական կազմակերպությունների հետ արդյունավետ փոխգործակցություն կառուցելու ռուսական կառավարության փորձը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Աշխարհիկ իշխանության և կրոնական համակարգերի փոխգործակցության պատմական փորձի վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ կրոնական միավորների նկատմամբ պետության վարած քաղաքականությունը:

Քննարկելով եկեղեցու առանձնահատուկ դերը՝ նախ և առաջ դիտարկել ենք այն պետության հետ փոխհարաբերությունների տեսանկյունից՝ ընդգծելով նրա երկակի բնույթը. որպես կրոնա-բարոյական և որպես իրավաբանական միություն, որն արդիական է նաև ներկա ժամանակներում:

***Ուսումնասիրության նպատակը և խնդիրները:*** Սույն ատենախոսությունում նպատակն է հետազոտել 1903-1914 թթ ընթացքում Այսրկովկասում՝ Վրացական էկզարխության, Հայ առաքելական եկեղեցու և մուսուլմանական հոգևոր կազմակերպությունների նկատմամբ ռուսական կառավարության իրականացրած կրոնական քաղաքականության պատմությունը, լուսաբանել քաղաքական այն իրողությունները, որոնք ազդեցին կրոնական քաղաքականության փոփոխման վրա:

Ելնելով նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ներկայացնել Այսրկովկասում Վրացական էկզարխության, Հայ առաքելական եկեղեցու և մուսուլմանական (շիա և սուննի) հոգևոր կազմակերպությունների իրավական կարգավիճակը:

2. Ներկայացնել տարածաշրջանի հոգևորականության դերն ու նշանակությունը իրենց համայնքների հոգևոր կյանքում:

3. Լուսաբանել Ռուսական առաջին հեղափոխության ազդեցությունն ու հետևանքները Այսրկովկասի հոգևորականության գործունեության վրա:

4. Հետազոտել տարածաշրջանի վերոհիշյալ կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունները կայսերական իշխանության հետ:

5. Ներկայացնել կրոնական օրենսդրության ազատականացման գործընթացը:

6. Լուսաբանել վերոհիշյալ կրոնական կազմակերպությունների գործունեությունը կայսրությունում ձևավորված իրավական նոր պայմաններում:

7. Վերլուծել տարածաշրջանում ռուսական կառավարության վարած կրոնական քաղաքականության ընդհանուր և առանձնահատուկ կողմերը:

8. Հիմնավորել կոնկրետ պայմաններում այդ քաղաքականության փոփոխության պատճառները:

**Ուսումնասիրության գիտական նորույթը:**

- Սույն ատենախոսության մեջ՝ արխիվային փաստաթղթերի, ժամանակի մամուլի և գրականության հիման վրա քննարկվող թեման ներկայացվում է նորովի: Թեև ինքնակալության հետ Վրացական էկզարխության, Հայ առաքելական եկեղեցու ինչպես նաև մուսուլմանական հոգևոր կառույցների առանձին փոխհարաբերությունների մասին գրվել են աշխատություններ և հոդվածներ, սակայն առկա գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդելու, որ այս թեման պատմագիտական ընդհանուր հետազոտության առարկա չի դարձել: Թեմայի մշակվածության տեսանկյունից պատմագիտության մեջ բացակայում է ուսումնասիրվող տարածաշրջանում և ժամանակահատվածում վերոհիշյալ խնդիրները լուսաբանող որևէ ամբողջական ուսումնասիրություն:
- Ատենախոսության մեջ քննության առնված խնդիրներն իրենց ժամանակագրական ընդգրկմամբ և քննության առնվող հարցերի ամբողջականությամբ առաջին անգամ է ուսումնասիրվում:
- Առաջին անգամ համեմատական կարգով ցույց է տրվել, թե 1903 թ. փետրվարի 26-ի, 1905թ. ապրիլի 17-ի և հոկտեմբերի 17-ի կայսերական բարձրագույն Հրովտարակները ինչ ազդեցություն են ունեցել տարածաշրջանի վերոհիշյալ կրոնական կազմակերպություններից յուրաքանչյուրի վրա:
- Ատենախոսության մեջ օգտագործվել է փաստաթղթերի լայն շրջանակ: Գիտական շրջանառության մեջ է դրվել հիմնախնդրի վերաբրյալ արխիվային նոր փաստաթղթեր: Դրանք նամակներ են, հաղորդագրություններ, որոնք

հնարավորություն են ընձեռել նորովի մեկնաբանել առանձին իրադարձությունները և հանգել նոր եզրակացության:

- Հիմնավորվել է ուղղափառ և այլահավատ եկեղեցիների համեմատ Հայ առաքելական եկեղեցու առանձնահատուկ կարգավիճակը:
- Առաջին անգամ համեմատական կարգով ներկայացվել է Այսրկովկասի վերոհիշյալ կրոնական կազմակերպություններում ընտրական սկզբունքի համակարգված պատմությունը: Եզրակացվել է, որ տարածաշրջանի կրոնական կազմակեպություններից միայն Հայ առաքելական եկեղեցին փաստացիորեն պահպանեց ընտրական սկզբունքը, իսկ հարցի իրավական կարգավորումը միայն ժամանակի խնդիր էր, որի ձգձգումը պայմանավորված էր միջազգային լարված իրավիճակով (Բալկանյան պատերազմ, Առաջին աշխարհամարտ): Թեև ընտրական սկզբունքն այս ժամանակահատվածում չամրագրվեց կայսրության ընդհանուր օրենսդրության մեջ, բայց և չհրապարակվեց որևէ նոր կոնդակ 1906, 1910 թվականների կոնդակները չեղարկելու մասին:
- Վերագնահատվել է կաթողիկոս Մաթևոս II-ի գործունեությունը, որը արդի հայ պատմագրության մեջ ներկայացվել է որպես «կարգ ու կանոնի և քաղաքական գործերին հոգևորականության չմիջամտելու կողմնակից»[1]: «Երկաթյա պատրիարքը», որն իր հուժկու ձայնը բարձրացրել էր սուլթան Աբդուլ Համիդի կոտորածների դեմ չէր կարող իր գործողություններում լինել սահմանափակ և հեշտությամբ հնազանդվել ռուսական կառավարության պահանջներին: Դրա վառ օրինակը «Թեմական ժողովների մասին ժամանակավոր հրահանգն» էր, որը փաստացիորեն օրինականացնում էր ընտրական սկզբունքը Հայ առաքելական եկեղեցում:
- Կաթողիկոս Գևորգ V-ի ակտիվ գործունեությունը Հայկական հարցի վերաբացման հարցում ստվերում է թողել նրա եկեղեցական քաղաքականությունը, որին էլ անդրադարձել ենք ատենախոսությունում:

**Ատենախոսության ժամանակագրական շրջանը:** Ուսումնասիրության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1903-ից մինչև 1914 թվականը: Այս ժամանակահատվածը խնդրի նման դրվածքով դեռևս հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել: Ժամանակագրության սկզբի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ 1903թ. փետրվարի 26-ին հռչակվեց «Պետական կարգի կատարելագործման նախասահմանումների մասին» կայսերական բարձրագույն հրովարտակը, որով հռչակվում էր կրոնահանդուրժողականության սկզբունքը: Ռուսական կայսրության կրոնական օրենսդրության ազատականացման գործընթացը սկիզբ առավ հենց փետրվարի 26-ի Հրովարտակի հրապարակումով: Այն իր խոր հետքը թողեց նաև Վրացական էկզարխության, Հայ առաքելական եկեղեցու և Այսրկովկասի մուսուլմանական հոգևոր կազմակերպությունների նկատմամբ իրականացվող

[1] Тунян В. Г., Правление католикоса М. Измирляна 1908-1910гг., Ер., 2004г., с.183.

կրոնական քաղաքականության վրա, երբ կրոնական այդ կազմակերպությունները աստիճանաբար սկսեցին ձգտել ինքնավարության:

Ատենախոսությունն ընդգրկում է մինչև 1914թ. հուլիսն ընկած շրջանը՝ Առաջին համաշխարհային պատերազմը ուսումնասիրության շրջանակներից բացառելու համար: Այդ ժամանակաշրջանը առանձին ուսումնասիրության նյութ է, քանի որ պատերազմական պայմանները զգալի փոփոխություններ բերեցին Ռուսական կայսրության ներքին՝ այդ թվում նաև կրոնական քաղաքականության մեջ:

**Ատենախոսության մեթոդաբանական հիմքը:** Ատենախոսության հիմքում ընկած պատմահամեմատական և վերլուծական մեթոդների համադրությամբ բազմակողմանի հետազոտության են ենթարկվել քննարկվող հիմնահարցերը: Ատենախոսությունը գրված է անկողմնակալ մոտեցմամբ՝ առանց քաղաքական և կրոնական նախասիրությունների:

**Ատենախոսության կիրառական նշանակությունը:** Սույն հետազոտությունը կրոնական քաղաքականության պատմության ուսումնասիրության տեսանկյունից պատմագիտական, ճանաչողական մեծ կարևորություն ունի: Աշխատանքում ներկայացված նյութը կարող է օգտակար լինել տարածաշրջանի կրոնական քաղաքականության պատմության հետագա ուսումնասիրություններում, կիրառվել բուհական հաստատությունների ուսումնական ծրագրերում, թեմատիկ դասախոսությունների, հատուկ դասընթացների նախապատրաստման ժամանակ:

**Ատենախոսության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած 7 հոդվածներում:

**Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն:** Ուսումնասիրության աղբյուրագիտական հիմք են հանդիսացել Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ), Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի և Ռուսաստանի պետական պատմական արխիվի (РГИА) պահոցների փաստաթղթերը:

Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերից առանձնապես կարևորել ենք Էջմիածնի Սուրբ Լուսավորչական Սինոդի[2], Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանի[3] և Կովկասի փոխարքայի գրասենյակի[4] փաստաթղթերը. դրանք կաթողիկոսական կոնդակներ են, գրություններ, զեկուցագրեր, դիմում

[2] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), Ֆ. 56, ց. 14, գ. 84 բ, 234, ց. 16, գ. 133, ց. 19, գ. 785:
[3] Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 226, ց. 5, գ. 26:
[4] Նույն տեղում, ֆ. 1262, ց. 2, գ. 433, 437, ց. 3, գ. 67, գ. 100:

խնդրանքներ, նամակագրություններ ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի պահոցներից օգտվել ենք Կաթողիկոսական դիվանի[5], կաթողիկոս Իզմիրլյանի[6] ֆոնդերից, որոնք նամակագրությունների, պաշտոնական գրությունների միջոցով լուսաբանում են Հայ առաքելական եկեղեցու առաջնորդների գործունեությունը:

Հետազոտության համար մեծ արժեք են ներկայացնում Ռուսաստանի պետական պատմական արխիվի (РГИА) նյութերը: Այստեղ հատկապես կարևորել ենք ներքին գործերի նախարարության օտար դավանությունների կրոնական գործերի դեպարտամենտի[7] փաստաթղթերը, որոնք իրենց մեջ ներառում են օրենսդրական հրամանագրեր, գործնական նամակագրություններ, զեկույցներ, հաշվետվություններ ոչ ուղղափառ և այլահավատ դավանանքների ղեկավարման հարցերի շուրջ, տեղեկություններ հոգևոր կառույցները ղեկավարող մամիների մասին և այլն:

Ուղղափառ թեմերի և ծխերի, եկեղեցիների, հոգևոր ուսումնական հաստատությունների մասին տեղեկություններ են պարունակվում Սինոդի գրասենյակի[8] գործերում: Այստեղ մեզ համար մեծ կարևորություն է ներկայացնում վրացական ազգային եկեղեցու ինքնավարության վերականգնման խնդիրը, որը Սրբազան Սինոդին կից ստեղծված Հատուկ խորհրդակցության նիստում բարձրացվել էր վրաց հոգևորականության կողմից:

Վրաց եկեղեցական ինքնավարության շարժումը լուսաբանվում է նաև Սրբազան Սինոդի օբեր-դատախազի գրասենյակի տնօրեն Վ. Ի. Յացկեվիչի ֆոնդում[9]: Այստեղ տեղեկություններ են հաղորդվում ինքնավարության շարժման կազմավորման և նրա գործունեության մասին:

Ուսումնասիրությունում օգտագործել ենք նաև փաստաթղթերի հայերեն և ռուսերեն հրատարակված մի շարք ժողովածուներ[10], պաշտոնական աղբյուրներ, օրենքներ և իրավական այլ ակտեր[11]:

---

[5] Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237բ, վավ. 4, 49, թղթ. 238, վավ. 110:

[6] Նույն տեղում, Անձնական դիվան կաթողիկոս Իզմիրլյանի, թղթ. 11, վավ. 236:

[7] Российский государственный исторический архив (РГИА), ф. 821, оп. 7, д. 294, 306, оп. 8, д. 633, оп. 133, д. 461, 469, 576.

[8] Նույն տեղում, ф. 796, оп. 186, д. 413.

[9] Նույն տեղում, ф. 1579, оп. 1, д. 157, 170:

[10] Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան: Խրիմյան Հայրիկը և ցարական բռնապետությունը (1903 -1907թթ.), կազմող՝ **Ս. Ա. Բէհբուդեան,** Զանգակ-97, Եր., 2000, **նույնի՝** Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան (1873-1910թթ.), Հայաստան, Երևան, 2001, **նույնի՝** Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան: Գևորգ Ե Վշտալի Սուրենեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847-1930), Մուղնի, Երևան, 2005, **Дякин В. С.,** Национальный вопрос во внутренней политике царизма ( XIX-начало XX вв), ЛИСС, СПБ,1998г.

Այսրկովկասում Ռուսաստանի կրոնական քաղաքականության լիարժեք լուսաբանման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ժամանակաշրջանի պարբերական մամուլում հրատարակված նյութերը: Լայնորեն օգտվել ենք ռուսալեզու և հայալեզու հրատարակություններից. "Тифлисский листок", "Закавказье", "Закавказская речь", "Каспий", "Баку", "Кавказ", "Русское слово", "Сотрудник закавказской миссии", «Արարատ», «Մշակ», «Հորիզոն», «Մուրճ» և այլն: Այս հրատարակություններից օգտվելիս ցուցաբերել ենք քննադատական և ընտրողական մոտեցում:

Բացի արխիվային փաստաթղթերից և մամուլից, կարևորվել է նաև ժամանակաշրջանի պետական, հասարակական և քաղաքական մի շարք գործիչների հաշվետվությունները, փաստագրությունները, հուշերը, որոնք լրացնում ու հարստացնում են իրադարձությունների պատմական նկարագիրը, օգնում ավելի ճիշտ և ամբողջական ընկալել դեպքերի զարգացման տրամաբանությունը, պատճառահետևանքային կապը[12]:

Վրացական ուղղափառ եկեղեցու ինքնավարության վերականգնման համար պայքարը լուսաբանելիս օգտվել ենք Ի. Կիրիոնի, Ն. Պոկրովսկիի, Կ. Ցինցաձեի, Ն. Դուռնովոյի աշխատություններից[13], որոնցում ներկայացված է

---

[11] **Акты, собранные Кавказской археографической комиссией:** Тифлис, т. I, 1866, **նույնի՝** т. II, 1868, **նույնի՝** т. IV, 1870, **Полное собрание законов Российской Империи,** т. XXIII, 1903 г., Отделение I, СПб, 1905, նույնի՝ т. XXVI, 1906, Отделение I. СПб, 1909, **Законодательные акты** переходного времени. 1904-1908гг., Право, СПб, 1909г.

[12] Всеподданнейшая записка по управлению Кавказским краем генерал-адъютанта **графа Воронцова-Дашкова**, Государственная тип., Тифлис, 1907, Всеподданнейший отчет за пятилетие управления Кавказом генерал-адъютанта графа Воронцова-Дашкова, СПБ, 1910, Всеподданнейший отчет за 8 лет управления Кавказом, генерал-адъютанта графа Воронцова-Дашкова, СПБ, 1913, **Всеподданнейший отчёт Обер-прокурора Святейшего Синода** по ведомству православного исповедания за 1900 года, Синодальная Типография, СПБ, 1903г., Всеподданнейший отчёт Обер-прокурора Святейшего Синода по ведомству православного исповедания за 1902 года, СПБ,1905г., Всеподданнейший отчёт Обер-прокурора Святейшего Синода по ведомству православного исповедания за 1903-1904 годы, Синодальная Типография, СПБ, 1909г, Всеподданнейший отчёт Обер-прокурора Святейшего Синода по ведомству православного исповедания за 1905-1907 годы, Синодальная Типография, СПБ, 1910г, **Витте С. Ю.,** Воспоминания, Царствование Николая II, Том I, 2-е издание, Ленинград, 1924г., **նույնի՝** Воспоминания, Царствование Николая II, Том II, 2-е издание, Ленинград, 1924г.

[13] **Игумен Кирион,** Обозрение Карталинских церквей Высокопреосвященнейшему Владимиром, Экзархом Грузии с историко-археол замечаниями, 1901г, **Покровский Н.,** Краткий очерк церковно-исторической жизни православной Грузии со времени появления в ней христианства и до вступления ее в подданство России, Электропечатия газеты Тифлисский Листок, 1905, **Цинцадзе К.,** Историческая справка по вопросу об автокефальности грузинской церкви, Ар. В. Кутателадзе, Тифлис, 1906г., **Дурново Н. Н.,** Судьбы грузинской церкви: (По вопросу о грузинской церковной автокефали), Русский стяг, Москва, 1907г. **նույնի՝** Исторический очерк автокефальных Церквей: Иверской и Имеретинской с списками 120 епархий и католикосов Мцхетских и Имеретинско-Абхазских, «Русская Печатня», М., 1910г.

վրացական անկախ եկեղեցու պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև էկզարխության կազմավորումը: Իրենց աշխատություններում հեղինակները փորձել են պատմական փաստերով հիմնավորել վրացական եկեղեցու ինքնավարության վերականգնման արդարացի պահանջը:

Խորհրդային միության փլուզումից հետո Ռուսաստանի կրոնական քաղաքականության պատմության ուսումնասիրությունը նոր մակարդակի վրա է դրվել: Արդի պատմագիտությունը՝ օգտվելով խնդիրն անկաշկանդ և անաչառ հետազոտելու հնարավորությունից, բազմակողմանի քննության է առել կայսերական Ռուսաստանի կրոնական քաղաքականությունը: Ամերիկյան պրոֆեսոր Պ. Վերտը իր աշխատությունում[14] Ռուսական կայսրության դավանանքների նկատմամբ իշխանության վերահսկողության ուժեղացումն ու թուլացումը պայմանավորում է միջազգային ասպարեզում Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը կամ թուլացմանը:

Հայկական պետական անկախության վերականգնումը մեծացրեց հետաքրքրությունը հայոց եկեղեցու քաղաքական պատմությանը նվիրված հետազոտությունների նկատմամբ: Թեմային առնչվող առանձին հարցեր լուսաբանվեցին հայ պատմաբանների՝ Է. Կոստանդյանի, Հ. Սիմոնյանի, Հ. Վ. Հովհաննիսյանի, Վ. Թունյանի մի շարք աշխատություններում[15]: Հայոց կաթողիկոսների գործունեությանն են անդրադարձել նաև Մ. Օրմանյանը, Մ. Աշճեանը, Ա. Նազարյանը, Յ. Մովսիսեանը, Ս. Շահ-Նազարեանցը, Ստեփան Կերտողը, Խ. Ղազարյանը, Գ. Մաիլյանը[16]: Այս հեղինակները ընդհանուր

---

[14] **Верт П.**, Православие, инославие, иноверие: очерки по истории религиозного разнообразия Российской империи, НЛО, М., 2012г.

[15] **Կոստանդյան Է.,** Մկրտիչ Խրիմյան. Հասարակական-քաղաքական գործունեությունը, Զանգակ-97 հրատ., Եր., 2000, **Սիմոնյան Հ.,** Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Հայագիտական, Եր., 2003, **Հովհաննիսյան Հ. Վ.,** Հայ առաքելական եկեղեցու բարենորոգության հիմնահարցը 1901-1906թթ. (կրոնագիտական վերլուծություն), ԵՊՀ հրատ., Եր., 2008, **Тунян В.Г.,** Эчмиадзинский престол XIX-начало XX вв, Изд.: ГИУА, Ер.,2001г., **նույնի՝** Эчмиадзинский вопрос в политике России 1873-1903гг., Изд.: ГИУА, Ер.,2002г., **նույնի՝** Последний период патриаршества Хримяна 1904-1907гг, Изд.: ГИУА, Ер., 2003г., **նույնի՝** Правление католикоса М. Измирляна 1908-1910гг, Изд.:ЧАРТАРАГЕТ, Ер., 2004г., **նույնի՝** Патриаршество Хримяна Айрика 1893-1907гг., Изд.: первопрестольный Св. Эчмиадзин, Св. Эчмиадзин, 2013г.

[16] Օրմանեան Մ., Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցիոյ անցքերը սկիզբէն մինչևի մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հատոր Գ, Ս. Էջմիածին. 2001, Աշճեան Մ., Էջեր հայ եկեղեցիոյ պատմութեէն, Եր., 1994, Նազարյան Ա., Հայոց եկեղեցին որպես քաղաքական և կրոնական գործոն, Պետհրատ II-րդ տպարան, Երևան, 1924, Մովսիսեան Յ., Հայաստանեացս Առաքելական Ս. եկեղեցիոյ պատմութիին, Ս. Էջմիածին, Էջմիածին, 2008, Շահ-Նազարեանց Ս., Վեհափառ Իզմիրլեանը, Ե. Ավետիքեանի հրատ., Մոսկվա, 1910, Ստեփան Կերտող, Հայ հոգևորականության մասնակցությունը XX դարի պատերազմներին և հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, Երևանի համալս. հրատ., Եր., 1999, Ղազարյան Խ., Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին

տեղեկություններ են հաղորդել Հայ առաքելական եկեղեցու և նրա գործիչների մասին:

Եկեղեցու քաղաքական պատմության հարցերի լուսաբանումից անմասն չեն մնացել վրաց պատմաբանները: Վրաց եկեղեցական գործիչների և ռուսական կառավարության փոխհարաբերությունների մասին արժեքավոր տեղեկություններ կան Ջ. Գամախարիայի աշխատությունում[17]: Այստեղ հեղինակը հանգամանալից ներկայացրել է վրաց եպիսկոպոսներ՝ Կիրիոնի և Լեոնիդի գործունեությունը՝ մասնավորապես նրաց պայքարը վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման համար:

Վրացական էկզարխության կառուցվածքի, նրա թեմերի, ծխերի և ուղղափառ բնակչության հոգևոր-կրոնական կյանքի մասին կարևոր տեղեկություններ են պարունակվում Կ. Ե. Սկուրատի աշխատությունում[18]:

Գիտամեթոդական առումով օգտակար են եղել պատմաբաններ՝ Դ. Ի. Իսմաիլ Զադեի, Մ. Պ. Մչեդլովի, Ն. Վ. Պոտապովայի աշխատությունները[19]: Այս հեղինակներն իրենց ուսումնասիրություններում բավականաչափ հարուստ նյութ են տվել Այսրկովկասի կրոնական կյանքի կառավարման վերաբերյալ:

Կայսրության մուսուլմանական համայնքի նկատմամբ իրականացվող կրոնական քաղաքականությունը արտացոլվել է ռուսական հետազոտողների մի շարք աշխատություններում: Աղբյուրագիտական արժեք ունեն հատկապես Դ. Յու. Արապովի աշխատությունները[20]: Կայսրության կյանքում կարևորելով իսլամի դերը՝ Դ. Յու. Արապովը իր հետազոտություններում հանգամանալից ներկայացրել է պետության բարձրաստիճան ղեկավարների վերաբերմունքը իսլամի նկատմամբ, կայսրության մուսուլմանական դաշտը վերահսկելու համար կայսրության քաղաքական գործիչների գործադրած ջանքերն ու առաջարկությունները:

Այսրկովկասի մուսուլմանական համայնքում կրոնական և առհասարակ հասարակական-քաղաքական կյանքի պասիվության և հետամնացության

---

կեսին, Սբ. Էջմիածին, 1999, Маилян Г., Архиепископ Магакия Орманян, Армянская церковь, «Անկյունակար», Ереван, 2006.

[17] **Гамахария Д.,** Святой Священномученник Кирион II (Садзаглишвили) и Абхазия, Тбилиси, 2006г.

[18] **Скурат К. Е.,** История Поместных православных церквей, Русские огни, М., 1994г.

[19] **Исмаил-Заде Д. И.,** Граф И. И. Воронцов-Дашков. Наместник Кавказский, ЗАО Центрполиграф, М., 2005, **Мчедлов М. П,** Религия в самосознании народа (религиозный фактор в идентификационных процессах), РАН, М., 2008г, **Потапова Н. В.,** Вероисповедная политика Российской империи и религиозная жизнь Дальнего Востока во второй половине XIX-начале XX вв, СахГУ, Южно-Сахалинск, 2009г.

[20] **Арапов Д. Ю.,** Ислам в Российской империи (законодательные акты, описания, статистика), Академкнига, М., 2001г, **նույնի՝** Система государственного регулирования ислама в российской империи (последняя треть XVIII- начало XXвв.), М., 2004г., **նույնի՝** Императорская Россия и мусульманский мир (конец XVIII- начало XXвв): сборник материалов, Наталис, М., 2006г., **նույնի՝** История религий в России, МГУ, М.,2006г.

մասին է վկայում Ս. Մ. Իսխակովի արժեքավոր աշխատությունը, որտեղ առաջին անգամ հրատարակվել են այսրկովկասյան թաթար հասարակական, քաղաքական գործիչ Ա. Մ. Թոփչիբաշիի արխիվային փաստաթղթերն ու նամակագրությունները[21]: Հեղինակի այս աշխատությունը վկայում է, որ Այսրկովկասի մուսուլմանական համայնքում կրոնական, հասարակական կյանքի ակտիվության նշաններն ի հայտ են եկել միայն Ռուսական առաջին հեղափոխության ժամանակ:

Այսրկովկասի շիա և սուննի մուսուլմանների հոգևոր-կրոնական վարչությունների կառուցվածքի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ա. Փաշայանը իր՝ «Իսլամն Ադրբեջանում, անցյալը և ներկան»[22] աշխատությունում:

Լեհ պատմաբան Թ. Սվենտոհովսկին իր աշխատությունում անդրադառնում է այսրկովկասյան թաթարների ազգային ինքնագիտակցության բարձրացմանը՝ այն կապելով 1905թ. Ռուսական առաջին հեղափոխության հետ, երբ այսրկովկասյան թաթարների մոտ նոր-նոր սկսվում էին ձևավորվել ազգային ձգտումները[23]:

Ինքնակալության և կայսրության մուսուլման հպատակների միջև կառուցված փոխհարաբերություններին է անդրադարձել նաև ամերիկյան պատմաբան Ռ. Դ. Քրյուզը[24]: Իր աշխատությունում նա վերլուծել է այն շարժառիթները, որոնք ստիպեցին կառավարությանը հրաժարվել կրոնական բռնաճնշումներից և հռչակել կրոնական հանդուրժողականության սկզբունքը:

Ընդհանրապես կայսրության և մասնավորապես Այսրկովկասի մուսուլմանական համայնքի կրոնական հիմնահարցերի լուսաբանման համար օգտակար են եղել Դ. Բ. Սեիդզադեի, Ռ. Գ. Լանդայի, Լ. Կլիմովիչի, Դ. Վ. Մուխետդինովի, Ս. Իսխակովի, Մ. Ա. Աբդուլաևի աշխատությունները[25]: Այս

---

[21] **Исхаков С. М.,** Документы и письма из личных архивов А.М. Топчибаши и Дж. Гаджибейли (1903-1934гг.), Социально-политическая МЫСЛЬ, М., 2012г.

[22] **Փաշայան Ա.,** Իսլամն Ադրբեջանում, անցյալը և ներկան, Նորավանք ԳԿՀ հրատ., Եր., 2014:

[23] **Tadeusz Swietochowski,** Russian Azerbaijan 1905-1920: The Shaping of national identity in a muslim Community, Cambridge University Press, Cambridge, 2004.

[24] **Crews R. D.,** For Prophet and Tsar: Islam and Empire in Russia and Central Asia, Harvard University Press, Cambridge, 2006.

[25] **Сеидзаде Д. Б.,** Азербайджанские депутаты в государственной Думе России, Изд.: государственное издательство, Баку, 1991г., **Ланда Р. Г.,** Ислам в истории России, Изд.: Восточная литература, М., 1995г., **Климович Л.,** Ислам в царской России, Изд.: ИМАН, Казань, 2003г., **Мухетдинов Д. В.,** Форумы российских мусульман на пороге нового тысячелетия, Махинур, Нижний Новгород, 2006г., **Исхаков С. М.,** Перяая русская революция и мусульмане Российской империи, Социально-политическая Мисль, М., 2007, **Абдуллаев М. А.,** Реформация ислама в конец XIX начале XXвв. и основные тенденции эволюции ислама в современных условиях, Эпоха, Махачкала, 2010г.

աշխատությունների հեղինակները չեն անդրադարձել մեր հետազոտության թեմային, սակայն տեղեկություններ են հաղորդել Այսրկովկասում մուսուլմանական հոգևոր կառավարման համակարգերի, նրանց ենթակառուցվածքների մասին:

Վերը նշված աղբյուրների և գրականության համալիր ուսումնասիրությունն ու քննությունը լայն հնարավորություն են ընձեռել լուսաբանելու Այսրկովկասում Ռուսական կայսրության իրականացրած կրոնական քաղաքականության համակարգված պատմությունը:

**Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

**Ներածության մեջ** ներկայացված են թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, ատենախոսության մեթոդաբանական հիմքը, ժամանակագրական սահմանները, սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

**Առաջին գլուխը՝ «Վրացական Էկզարխությունը Ռուսական ուղղափառ եկեղեցու կազմում 1903-1914թթ.»** բաղկացած է երեք ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում՝ «Վրացական Էկզարխության կարգավիճակը XXդ. սկզբին: Վրաց եկեղեցական ինքնավարության շարժման առաջացման նախադրյալները»** ներկայացված են Ռուսական ուղղափառ եկեղեցու կազմում գտնվող Վրացական էկզարխության կախյալ գոյավիճակը և այն իրադարձությունները, որոնք ծնունդ տվեցին վրացական եկեղեցական ինքնավարության շարժման առաջացմանը:

**Երկրորդ՝ «Պայքար վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման համար (1906-1907թթ.)» ենթագլխում**, լուսաբանվել է (Սրբազան Սինոդին կից ստեղծված Հատուկ խորհրդակցությունում, Նախախորհրդարանի նիստերում, ինչպես նաև մամուլում) վրաց առաջադեմ հոգևորականության և մտավորականության պայքարը վրացական ազգային եկեղեցու ինքնավարության վերականգնման համար:

**Երրորդ՝ «Վրացական Էկզարխությունը 1908-1914թթ.» ենթագլխում** ուսումնասիրվել է էկզարխ Նիկոնի եկեղեցական քաղաքականությունը, որն առաջացրել էր վրաց եկեղեցական ինքնավարության շարժման առաջնորդների դժգոհությունը: Արդյունքում էկզարխը դառնում է ահաբեկչության զոհ, իսկ վրացական եկեղեցու ինքնավարության հարցը աստիճանաբար կորցնում է իր նշանակությունը:

**Երկրորդ գլուխը՝ «Ռուսական կառավարության և Մայր Աթոռ Էջմիածնի փոխհարաբերությունները 1903-1914թթ.»** կազմված է երեք ենթագլուխներից:

**Առաջին՝ «Ռուսական կառավարության բռնաճնշումները Մայր Աթոռ Էջմիածնի նկատմամբ XXդ. սկզբին» ենթագլխում** հանգամանալից

ներկայացվում է նշված ժամանակահատվածում Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ ինքնակալության վարած հետադիմական քաղաքականությունը, որն իր գագաթնակետին է հասնում 1903թ. հունիսի 12-ի՝ «Եկեղեցական գույքի բռնագրավման մասին» օրենքի հրապարակումով: Անդրադարձ է կատարված օրենքի կիրառման դեմ՝ Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա-ի գլխավորությամբ հայ ժողովրդի մղած պայքարին, որը կառավարող շրջանների կողմից ընկալվել էր որպես անհնազանդություն:

**Երկրորդ ենթագլխում**, որը վերնագրված է **«Կառավարության զսպիչ միջոցառումները և Էջմիածնի կարգավիճակի հարցը 1906-1910թթ.»** լուսաբանվում են Էջմիածնի Կենտրոնական ժողովում ծավալված իրադարձությունները, որոնք լուրջ անհանգստության տեղիք տվեցին կայսրության վարչապետ Պ. Ա. Ստոլիպինին, ինչն էլ դրդեց նրան միջոցներ ձեռնարկել հայոց կաթողիկոսին հատուկ կարգավիճակից զրկելու և նրա իրավունքները սահմանափակելու ուղղությամբ: Քննարկվել են կայսրության ներքին և արտաքին քաղաքական այն իրողությունները, որոնք ստիպեցին Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին և արտաքին գործերի նախարար Ա. Պ. Իզվոլսկիին հանդես գալու հայոց կաթողիկոսի իրավունքների ամենաջերմ պաշտպանի դերում:

**Երրորդ ենթագլխում՝ «Ռուսական կառավարության և Մայր Աթոռ Էջմիածնի հարաբերությունների կարգավորումը միջազգային լարված պայմանների համատեքստում (1911-1914թթ.)»,** ներկայացված է Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության գործընթացը, որը բնորոշվեց քաղաքական սուր պայքարով, և այն հանգամանքները, որոնք ստիպեցին ռուսական կառավարությանը օրինականացնելու ընտրությունների արդյունքները: Ցույց են տրվում միջազգային այն իրադարձությունները, որոնք նպաստեցին ռուսական իշխանության և Մայր Աթոռ Էջմիածնի հարաբերությունների կարգավորմանը:

**Երրորդ գլուխը՝ «Ռուսական կառավարության կրոնական քաղաքականությունը Այսրկովկասի մուսուլմանական հոգևոր կազմակերպությունների նկատմամբ 1903-1914թթ.»** բաղկացած է երեք ենթագլուխներից: **Առաջին՝ «Շիա և սուննի մուսուլմանների հոգևոր կառավարման համակարգը Այսրկովկասում: Մուսուլմանական շարժումը XX դարի սկզբին» ենթագլխում** ներկայացվել են Այսրկովկասի շիա և սուննի մուսուլմանների հոգևոր-կրոնական կառավարման համակարգերի կառուցվածքը: Լուսաբանվել է մուսուլմանական շարժումը և նրա ազդեցությունը այսրկովկասյան մուսուլմանների վրա:

**Երկրորդ ենթագլխում՝ «Ռուսական առաջին հեղափոխության ազդեցությունն Այսրկովկասի մուսուլմանական համայնքի վրա»** ներկայացվել է հեղափոխության նկատմամբ մուսուլման հոգևորականության վերաբերմունքը, ինչպես նաև՝ հեղափոխության նշանակությունը այսրկովկասյան թաթարների կյանքում: Վերջիններս առաջին անգամ

հետաքրքրություն դրսևորեցին կրոնական, քաղաքական և հասարակական հարցերի նկատմամբ:

**Երրորդ՝ «Այսրկովկասյան թաթարների պայքարը կրոնական բարեփոխումների համար: Մուսուլմանական հարցը ռուսական կառավարության կրոնական քաղաքականությունում 1908-1914թթ.» ենթագլխում** անդրադարձել է կատարվել կառավարող շրջանների ուշադրության կենտրոնում գտնվող մուսուլմանության խնդրին: Ներկայացվել են կառավարության ձեռնարկած միջոցառումները նրանց շրջանում պանիսլամական և պանթյուրքական գաղափարների տարածումը կանխարգելելու համար:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ** ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները, կատարվում են եզրահանգումներ.

1. Ռուսական կայսրությունում կրոնը օգտագործվում էր ազգային, քաղաքական խնդիրների լուծման համար, հետևաբար կրոնական քաղաքականությունը ներքին, երբեմն նաև արտաքին քաղաքականության մաս էր կազմում: Կրոնական հարցերը, ընդհանուր առմամբ, կարգավորվում էին համառուսական օրենսդրությամբ: Ռուսական կառավարության կրոնական քաղաքականության մեջ հստակ ուրվագծվում էր վերջինիս գլխավոր սկզբունքը. կայսրության բոլոր դավանանքների նկատմամբ պետության լիակատար վերահսկողության ապահովումը: Թեև ուղղափառ եկեղեցին առաջնային և տիրապետող կարգավիճակ ուներ, այնուհանդերձ այն ևս գտնվում էր լիակատար վերահսկողության ներքո: Սակայն XX դարի սկզբին, հեղափոխական շարժումների ճնշման պայմաններում, կառավարությունը ստիպված էր վերանայել իր կրոնական քաղաքականությունը և գնալ հանդուրժողականության սկզբունքների ճանապարհով:

2. XX դ. սկզբին Ռուսական կայսրության կրոնական քաղաքականության մշակման գործում առաջավոր դերը, անշուշտ, պատկանում էր ներքին գործերի նախարարությանը: Այսրկովկասի այլադավան և այլահավատ կրոնական հաստատությունների գործունեությունը վերահսկվում էր նաև ներքին գործերի նախարարությունում օտար դավանությունների դեպարտամենտի կողմից: Պետական երրորդ մարմինը, որը զբաղվում էր տարածաշրջանի կրոնական հարցերով՝ արտաքին գործերի նախարարությունն էր: Այն փաստը, որ պետական երեք գերատեսչություններ զբաղվում էին կրոնական խնդիրների կարգավորմամբ, վկայությունն է այն բանի, թե որքան էր կարևորվում կրոնական քաղաքականությունը կայսերական Ռուսաստանում:

Ինչ վերաբերում է Վրացական էկզարխությանը, ապա այն գտնվում էր Ռուսական ուղղափառ եկեղեցու Սրբազան Սինոդի անմիջական վերահսկողության ներքո:

3. Ռուսական կայսրությունում ուղղափառ դավանանքը հատուկ կարգավիճակ ուներ: Այդ առումով Վրացական էկզարխությունը՝ լինելով

Ռուսական ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչը, տարածաշրջանում իր ուրույն տեղն ուներ: Ստեղծելով եկեղեցական կենտրոնացված այդ հզոր կազմակերպությունը՝ կայսերական իշխանությունը նպատակ էր հետապնդում Կովկասում ստեղծելու Ռուսական ուղղափառ եկեղեցու իրական տիրապետություն, որով կամրապնդեր իր դիրքերը տարածաշրջանում: Սակայն էկզարխությանը բնորոշ էր կայսերական բյուրոկրատական կարգը, ուստի եկեղեցական այդ կառույցը չկարողացավ լուրջ ազդեցություն ունենալ տարածաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի վրա: Վրացական էկզարխության ներքին, հոգևոր զարգացումը սահմանափակվում էր Ռուսական ուղղափառ եկեղեցու Սինոդի կառավարման պայմաններով: Վերջինս իր «հոգածության» ներքո էր առել էկզարխության գործունեության բոլոր բնագավառները: Այս ամենի արդյունքում աստիճանաբար խզվեց հոգևոր կապը վրացական ուղղափառ համայնքի և էկզարխության միջև, հավատացյալների շրջանում կազմալուծվեց կրոնա-բարոյական կյանքը: Վրացական էկզարխությունում՝ ինքնակալության իրականացրած միջոցառումների շնորհիվ վրացական եկեղեցին աստիճանաբար կորցեց իր ազգային դիմագիծը:

4. Ի տարբերություն Վրացական էկզարխության՝ Հայ առաքելական եկեղեցին ազգային եկեղեցու վառ օրինակ էր: Պետականության բացակայության պայմաններում նրա գործառույթները իրականցնում էր եկեղեցին՝ իր մեջ մարմնավորելով ազգային հիմքերը: Այս հանգամանքը լավ էին հասկանում կայսերական բարձրաստիճան պաշտոնյաները: Նրանցից անհեռատեսները (Գ. Ս Գոլիցին, Վ. Կ. Պլեվե), չհաշտվելով կայսրությունում հայոց եկեղեցու առանձնահատուկ կարգավիճակի հետ, կառավարության առջև պարբերաբար բարձրացնում էին Հայ առաքելական եկեղեցու դերի ու նշանակության իջեցման մասին հարցը: Մայր Աթոռը անհրաժեշտ էր կայսրին հայերի շրջանում կառավարությանը ենթակա տեղական կառույց ունենալու համար, ինչպես Վրացական էկզարխության դեպքում էր:

5. Կայսերական կառավարությանը լուրջ մտահոգվելու առիթ տվեց մուսուլման հասարակության հոգևոր կյանքը արդյունավետ վերահսկելու խնդիրը: Իսլամը ճանաչելով որպես օրինական կրոն՝ կառավարությունը հաշվի էր առնում նրա առանձնահատկությունները: Այսրկովկասի մուսուլմանների կրոնական կյանքը ղեկավարում էին դեռևս 1872թ. ստեղծված հոգևոր-կրոնական երկու վարչությունները, որոնք կոչված էին վարելու շիա և սուննի մուսուլմանների հոգևոր գործերը: Այսրկովկասի մուսուլմանական հոգևոր վարչությունների գործունեությունը վերահսկվում էր Կովկասի փոխարքայի կողմից: Վերջինս էլ իր հերթին նրանց գործունեության համար պատասխանատու էր կայսրին: Հոգևոր վարչությունների գործունեությունը գտնվում էր նաև ներքին գործերի նախարարի և օտար դավանությունների վարչության անմիջական վերահսկողության ներքո: Նման կերպով կայսերական

վարչակազմը կարողացել էր ստեղծել լիովին վերահսկելի մուսուլմանական հոգևոր կրոնական համակարգ:

6. Հայ առաքելական եկեղեցին Ռուսական կայսրությունում հատուկ տեղ էր զբաղեցնում: Այն կայսրությունում միակ կրոնական կազմակերպությունն էր, որն ուներ ընտրված և կառավարությունից փաստացի անկախ ղեկավար՝ ի դեմս հայոց կաթողիկոսի: Նա կրում էր «Ամենայն հայոց կաթողիկոս» պաշտոնական տիտղոսը և ավանդաբար դիտվում էր որպես Ռուսական կայսրությունից դուրս բնակվող հայերի վրա ռուսական ազդեցության տարածողը: Հայոց կաթողիկոսի անկախ գործունեությունը և նրա օրեցօր աճող հեղինակությունը լուրջ մտահոգության տեղիք տվեց կառավարող շրջաններին: Կայսերական գործիչները՝ ի դեմս Պ. Ա. Ստոլիպինի սկսեցին միջոցներ փնտրել կաթողիկոսի իշխանությունը սահմանափակելու, նրան «սովորական հոգևոր ղեկավարի աստիճանի իջեցնելու» համար: Սակայն կայսերական բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում գտնվեցին նաև սթափ դատող քաղաքական գործիչներ (Ի. Ի. Վորոնցով-Դաշկով, Ա. Պ. Իզվոլսկի), ովքեր լավ էին հասկանում, որ ռուսական կառավարության հրամանը դժվար թե ստիպեր հայերին ի դեմս կաթողիկոսի այլևս չճանաչել նրան որպես ողջ հայության առաջնորդի, այլ կրկին ինքնակալության դեմ կհաներ հայ ժողովրդին:

7. Բոլորովին այլ էր իրավիճակը վրացական եկեղեցում, որը 1811 թվականից ուներ էկզարխության կարգավիճակ: Առաջին էկզարխ Վառլամից (Էրիստավի) հետո այդ պաշտոնը զբաղեցնում էին միայն ռուսները, որոնք անվերապահորեն իրականացնում էին Սրբազան Սինոդի կամքը: Էկզարխները չգիտեին տեղի լեզուն, ինչի արդյունքում վրացերենը ավելի ու ավելի դուրս մղվեց հոգևոր կրթությունից ու ժամերգությունից: Եկեղեցական լեզվի անհասկանալի լինելը դարձավ եկեղեցուց ծխական բնակչության օտարացման հիմնական պատճառներից մեկը: Չտիրապետելով վրացերենին՝ ռուս հոգևորականությունը չկարողացավ կենդանի և ուղղակի կապ հաստատել հավատացյալների հետ: Ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, որ ղեկավար պաշտոններին չէին առաջադրվում վրաց հոգևորականները, նրանք վճարվում էին ավելի քիչ, քան ռուս հոգևորականները: Փաստորեն էկզարխությունում կրոնը դիտվում էր որպես ուծացման միջոց, որը պետք է տեղի եկեղեցուն կապեր կենտրոնական իշխանության հետ: Այս ամենի արդյունքում խզվել էր հոգևոր կապը հոգևորականության և հավատացյալների միջև:

8. Այսրկովկասի մուսուլման հոգևորականության նկատմամբ պետական վերահսկողություն սահմանելու համար 1903-1914 թվականների ընթացքում ռուսական կառավարությունը լուրջ քայլերի չդիմեց: Մուսուլմանական հոգևոր-կրոնական երկու վարչությունները շարունակում էին գլխավորել շեյխ-ուլ-իսլամն ու մուֆթին, որոնք իրենց պաշտոնին նշանակվում էին կայսրի հրամանով՝ Կովկասի փոխարքայի առաջարկությամբ: Շեյխ-ուլ-իսլամի և մուֆթիի գործունեությունը վերահսկում էր Կովկասի փոխարքան, ով իր հերթին

հաշվետվություն էր ներկայացնում կայսրին: Մուսուլմանների հոգևոր առաջնորդները ֆինանսավորվում էին կառավարության կողմից: Հասարակության հոգին կառավարելու համար նրանք պետական բարձր աշխատավարձ էին ստանում: Արդյունքում շեյխ-ուլ-իսլամն ու մուֆթին վերածվել էին պետական պաշտոնյաների և տեղերում իրականացնում էին ինքնակալության կամքը: Կայսերական պաշտոնյաները հեշտությամբ օգտագործում էին իսլամի մեջ հոգևորականության զբաղեցրած դերը: Նրանք մուսուլման հոգևորականությանը կառավարության շահերին ծառայեցնելու խնդիր էին դրել: Մուսուլման հոգևորականությունը ամուր պատնեշ էր տարածաշրջանում կայսրության հիմքերի պահպանման համար:

9. ՈՒսումնասիրվող ժամանակահատվածում հասարակական, քաղաքական և հոգևոր գործիչները սկսեցին համարձակորեն քննադատել գոյություն ունեցող օրենսդրությունը՝ պահանջելով ընտրական սկզբունքի կիրառումը:

Վրաստանի էկզարխ Նիկոնի ջանքերով Սրբազան Սինոդը 1907թ. փետրվարի 10-ին ընդունեց որոշում, որով ծխական քահանաների պաշտոններում ընտրված թեկնածուների հաստատելու իրավունքը հանձնվում էր թեմական առաջնորդներին: Սա աննախադեպ երևույթ էր Վրացական էկզարխության պատմության մեջ, քանզի դրանով հիմք դրվեց ընտրական սզբունքին: Սակայն ընտրական սկզբունքը երկար կյանք չունեցավ էկզարխությունում: Սինոդի որոշմամբ 1911թ. դեկտեմբերի 8-ին Վրացական էկզարխությունում վերացվում է ընտրական սկզբունքը: Վերականգնվում է տեղի եպիսկոպոսի կողմից քահանաների նշանակման կարգը, որը գոյություն ուներ մինչև 1907թվականը:

10. 1906թ. մայիսի 10-ի կոնդակով Մկրտիչ Ա-ն ժողովուրդին իրավունք է շնորհում՝ իր ներկայացուցիչների միջոցով մասնակցելու ոչ միայն կաթողիկոսական և քահանայական ընտրություններին, այլև թեմական առաջնորդների, հաջորդների և հոգևոր վարչական հաստատությունների ընտրությանը: Չնայած այն հանգամանքին, որ կաթողիկոսի կոնդակը հակասում էր գործող օրենսդրությանը, այնուամենայնիվ, այն չբողոքարկվեց կառավարության կողմից, և ընտրական սկզբունքը սկսեց գործել ռուսահայ թեմերում: Ավելին, 1910թ. մայիսի 28-ին կաթողիկոս Մաթևոս II-ը հրապարակեց «Թեմական ժողովների մասին ժամանակավոր հրահանգը», որը փաստացի օրինականացրեց արդեն ձևավորված կարգը: Մաթևոս II-ին հաջորդած Գևորգ V-ը ևս քայլեր կատարեց ընտրական սկզբունքը գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու համար: Արդյունքը եղավ այն, որ ներքին գործերի նախարար Ա. Ա. Մակարովը համաձայնեց՝ կաթողիկոսի կողմից պատճառաբանված առաջարկությունների դեպքում համապատասխանեցնել այն օրենսդրության ընդհանուր հիմքերին: Փաստացի Հայ առաքելական եկեղեցին XX-րդ դարի սկզբի իրադարձությունների արդյունքում ոչ միայն

պահպանեց, այլ ամրապնդեց իր արտոնյալ կարգավիճակը ուղղափառ, այլադավան և այլահավատ մյուս կրոնական կազմակերպությունների նկատմամբ:

11. Այսրկովկասի մուսուլմանական հոգևոր կրոնական վարչությունների արմատական վերակազմավորման համար ակտիվ պայքար մղեցին հասարակական, քաղաքական գործիչները: 1909թ. Մ. Թոփչիբաշևը և նրա համախոհները առաջ քաշեցին բարեփոխումների տարբեր նախագծեր, որոնք առաջարկում էին բոլոր հոգևոր պաշտոնները դարձնել ընտրովի՝ անփոփոխ թողնելով միայն շեյխ-ուլ-իսլամի և մուֆթիի հաստատման կարգը: 1914թ. հունիսի 15-ին կայացավ մուսուլմանների Համառուսական չորրորդ համագումարը, որտեղ ընդունեց «Կայսրության մուսուլմանների հոգևոր գործերի ղեկավարման մասին» կանոնադրությունը: Այն հռչակում էր հոգևորականության ընտրության սկզբունքը: Սակայն բոլոր այս փորձերը ոչինչ չտվեցին Ռուսական կայսրության մուսուլման հասարակությանը:

12. Այսրկովկասի վերոհիշյալ կրոնական կազմկերպութուններից յուրաքանչյուրի նկատմամբ կայսերական կառավարությունը յուրովի, հատուկ քաղաքականություն էր վարում: Դա առաջին հերթին պայմանավորված էր Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքական հանգամանքներով:

Վրացական եկեղեցու նկատմամբ իրականացրած կրոնական քաղաքականությունը նպատակ ուներ ինտեգրելու էկզարխությունը ռուսական սինոդական համակարգի մեջ: Հավատքի ընդհանրությունը պետք է ծառայեր այդ գործին: Այդ քաղաքականությունը ցանկալի արդյունք տվեց: Ռուս էկզարխները աջակցում էին Ռուսական կայսրության ներքին և արտաքին քաղաքականությանը՝ նվիրվածություն քարոզելով ինքնակալության հանդեպ: Սակայն 1905թ. Ռուսական առաջին հեղափոխությունը խոր հետք թողեց վրաց հոգևորականության եկեղեցական գիտակցության վրա: Նրանց մեջ հասունացավ վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման անհրաժեշտության պահանջը, որոնք բացահայտորեն հակադրվեցին էկզարխությանը: Օգտվելով ներքաղաքական բարենպաստ իրավիճակից՝ վրաց հոգևորականությունը ընդվզեց ռուսական եկեղեցական տիրապետության դեմ: Պայքարն ընթացավ գերազանցապես Նախախորհրդարանի նիստերի դահլիճում և մամուլում: Սակայն Ռուսական առաջին հեղափոխության մարումից և էկզարխ Նիկոնի սպանությունից հետո (1908թ.) վրացական եկեղեցու ինքնավարության համար պայքարը սկսեց աստիճանաբար մարել: Ի սկզբանե ինքնավարության գաղափարը հաջողության քիչ հավանականություն ուներ: Ինքնավար վրացական եկեղեցին լրջորեն կբարդացներ քաղաքացիական կարգ ու կանոնի կարգավորումը, որը հենվում էր կրոնական հիմքերի վրա:

13. Հայ առաքելական եկեղեցին միակ եկեղեցին էր, որը ֆինանսական առումով անկախ էր պետությունից: XX դարի առաջին տարիներին Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ կայսերական իշխանությունները վարում էր

բացահայտ գաղութատիրական քաղաքականություն, որն արտացոլվեց 1903թ. հունիսի 12-ի կայսերական հրամանագրում: Օրենքի կիրառումից հետո հայոց եկեղեցին կվերածվեր կառավարությունից ֆինանսական կախում ունեցող սովորական վարչական մարմնի: Լավ գիտակցելով դա՝ կաթողիկոս Մկրտիչ Ա-ն անձամբ հրաժարվեց ենթարկվել օրենքին, հայտարարելով, որ այն մշակվել է առանց իր մասնակցության: Հանդիպելով հայ ժողովրդի վճռական դիմադրությանը՝ բռնագրավման գործընթացը լիովին ձախողվեց: Ռուսական կառավարությունը պարբերաբար վերանայում էր իր դիրքորոշումը հայկական եկեղեցու նկատմամբ՝ նկատի ունենալով Ռուսաստանի ներքին և արտաքին իրադրությունը: Հայկական համայնքի մեջ Ռուսաստանը տեսնում էր Արևելքի վրա ազդելու ամենակարճ ուղին և հավատարիմ միջոցը: Հետևաբար Ռուսաստանում բռնկված հեղափոխությունը և Կոստանդնուպոլսի վրա Արևմուտքի աճող ազդեցությունը ինքնակալությանը ստիպեցին հրաժարվել Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ կիրառած բռնաճնշումներից և բացահայտ առճակատումից անցնել առավել զգույշ ու կշռադատված քաղաքականությանը (1905-1911թթ.): Կառավարող շրջանները ստիպված էին հաշտվել կաթողիկոսական համակարգի գոյության հետ: Դրան նպաստեց միջազգային լարված դրությունը, երբ Ռուսաստանին անհրաժեշտ էին դաշնակիցներ, այլ ոչ թե ներքին թշնամիներ:

14. Մուսուլմանական հոգևոր կազմակերպությունների նկատմամբ ռուսական կառավարության կրոնական քաղաքականությունը առավելապես պայմանավորված էր արտաքին քաղաքականությամբ: Ռուսական առաջին հեղափոխությունը ինքնակալությանը ստիպեց 1905թ. օրինականացնել մուսուլմանական միությունների և ժողովների գործունեությունը, ճանաչել մուսուլմանական հավատքի ազատ դավանման իրավունքը: Ապավինելով մուսուլման բարձրաստիճան հոգևորականության հավատարմությանը՝ իշխանությունը փորձում էր կանխել ցանկացած հակապետական գաղափարի տարածումն այդ հասարակության շրջանում: Դա բերեց նրան, որ Ռուսական առաջին հեղափոխության ժամանակ մուսուլման հասարակությունը, ի տարբերություն կայսրության այլ ժողովուրդների, հեռու մնաց հեղափոխությունից: Դրանում իր մեծ ավանդն ուներ մուսուլման հոգևորականությունը: Մոլլաների ողջ քարոզչությունը ուղղվեց հեղափոխության և նրա մասնակիցների դեմ: Վերջիններս ջանք չխնայեցին իրենց հավատացյալներին հեղափոխական ալիքից հեռու պահելու համար:

Հեղափոխությունները Թուրքիայում և Իրանում ակտիվացրեցին ինչպես մուսուլմանների քաղաքական շարժումները, այնպես էլ իշխանական կառույցների գործունեությունը «մուսուլմանական հարցով»: Չթերագնահատելով իսլամի ուժը՝ պետական պաշտոնյաները միջոցներ էին փնտրում այն ավելի վերահսկելի դարձնելու, պանթյուրքական և պանիսլամական գաղափարների մուտքը կայսրություն չթույլատրելու համար: Հարցը պարբերաբար քննարկվում

էր ինչպես առանձին գերատեսչություններում, այնպես էլ միջգերատեսչական Հատուկ խորհրդակցություններում:

15. Ռուսական առաջին հեղափոխության ընթացքում մուսուլման հոգևորականության փոխարեն կառավարությանը պահանջներ ներկայացրեցին Այսրկովկասի առաջադեմ հասարակական-քաղաքական գործիչները: Վերջիններս մուսուլմանների Համառուսական խորհրդակցությունների ժամանակ (1905-1906, 1914թթ.) իշխանություններից պահանջեցին հոգևոր կառավարման համակարգի բարեփոխումներ: Կառավարությանը ներկայացրած հանրագրերում, ժողովրդավարական պահանջների հետ մեկտեղ, նրանք բարձրացրեցին նաև կրոնի ազատ դավանման իրավունքի պահանջը: Ընդհանուր առմամբ մուսուլմանները չմասնակցեցին հեղափոխական իրադարձություններին, սակայն այն մեծ նշանակություն ունեցավ նրանց՝ հատկապես այսրկովկասյան թաթարների համար: Վերջիններիս մոտ առաջին անգամ հետաքրքրություն առաջացավ հասարակական, քաղաքական, կրոնական հարցերի շուրջ:

16. Այսրկովկասի վերոհիշյալ կրոնական կազմակերպությունների նկատմամբ ռուսական կառավարության վարած կրոնական քաղաքականությունը համեմատաբար բարենպաստ էր Վրացական էկզարխության համար (հավատքի ընդհանրության պարզ պատճառով):

***Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.***


1. Ավոյան Ս., Ռուսական ինքնակալության և Մայր Աթոռ Էջմիածնի փոխհարաբերությունները 1900-1914 թթ., «Ակունք», Երևան, 2013, N 3 (9), էջ 65-80:
2. Ավոյան Ս., Պայքար վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման համար (1906-1907թթ.), «Ակունք», Երևան, 2014, N 1 (10), էջ 65-74:
3. Ավոյան Ս., «Մահմեդական շարժումը» ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության տարիներին, «Կանթեղ», Երևան, 2015, N 2 (63), էջ 77-83:
4. Ավոյան Ս., Մահմեդական հոգևոր կառավարման համակարգը Անդրկովկասում XX դարի սկզբին, «Մխիթար Գոշ», 2015, N 2 (43), էջ 182-185:
5. Ավոյան Ս., Առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության ազդեցությունը վրաց հոգևորականության վրա, «Կանթեղ», Երևան, 2016, N 1 (66), էջ 65-72:

6. Ավոյան Ս., Պ. Ա. Ստոլիպինի առաջարկները Ամենայն հայոց կաթողիկոսի կարգավիճակի իջեցման հարցի շուրջ 1906-1910թթ., «Լրատու», Երևան, 2016, էջ 69-75:
7. Ավոյան Ս., Վրաստանի էկզարխ Նիկոնի եկեղեցական քաղաքականությունը, «Ակունք», Երևան, 2017, N 1 (15), էջ 77-83:

**АВОЯАН САТЕНИК МАМИКОНОВНА**

# ЦЕРКОВНАЯ ПОЛИТИКА РОССИЙСКОГО ПРАВИТЕЛЬСТВА В ОТНОШЕНИИ ЗАКАВКАЗСКОЙ ГРУЗИНСКОЙ ПРАВОСЛАВНОЙ И АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВЕЙ, МУСУЛЬМАНСКОЙ ДУХОВНОЙ ОРГАНИЗАЦИИ (1903-1914гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история, международные отношения». Защита состоится 13-го июля 2018 года в $13^{00}$, на заседании специализированного совета 006 «Всемирная история, международные отношения» действующего при Институте востоковедения Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

## РЕЗЮМЕ

Изучение истории религиозной политики имеет важное и актуальное значение. Распад Советского Союза внес радикальные изменения в государственную и политическую систему бывших советских республиках Южного Кавказа. Во внутренней и внешней политике государств резко возросла роль религиозного фактора.

Диссертация состоит из введения, 3 глав, заключения, списка использованных источников и литературы.

Во введении обоснована важность и актуальность, цели и задачи, методика работы, научная новизна, представлены историография, источники и литература.

В первой главе диссертации – **«Грузинский экзархат в составе Русской православной церкви 1903-1914 гг.»**, показано зависимое существование грузинского экзархата. Являясь частью Священного Синода, он безоговорочно подчинялся ему. Но ситуация изменилась в 1905 году, когда революционно - освободительная идеология охватила грузинских священнослужителей, и они начали открыто критиковать статус экзархата, требуя восстановления автокефальности грузинской церкви. Борьба продолжалась в основном в Предсоборном Присутствии и в прессе. Но после первой русской революции и убийства экзарха Никона, борьба за автокефальность грузинской церкви стала постепенно угасать. Статус экзархата в составе Святейшего Синода в 1903 -1914 гг., так и не изменился.

Во второй главе диссертации - **«Взаимоотношения Российского правительства и Святого Первопрестола Эчмиадзина в 1903-1914 гг.»**

представлены три этапа их развития, которые менялись в зависимости от внешней и внутренней политики империи. С конца XIX века до первой русской революции, самодержавие вело реакционную политику в отношении Армянской Апостольской Церкви, итогом которой стала секуляризация имущества армянской церкви. Но начавшаяся революция заставила правительство перейти от открытого противостояния к более взвешенной политике (1905 -1911гг.). А уже начиная с 1911 года взаимоотношения между правительством и Святым Первопрестолом Эчмиадзина стабилизировались.

В третьей главе диссертации - **«Религиозная политика российского правительства в отношении Закавказской мусульманских духовных организации в 1903 -1914 гг.»** рассмотрены те особенности, которые явно наметились в течение 1903-1914 гг. Мусульманское духовенство, привлекаясь к имперской системе управления, усиливало позиции в общественной жизни, проповедуя среди единоверцев верность к властям. Это привело к тому, что во время Первой русской революции мусульманское общество, в отличие от других народов империи, осталось в стороне от революции. Но с другой стороны видные политики Российской империи осознавая огромную силу ислама, искали меры для большего контроля исламских масс, тем более что в условиях распространения идеи пантюркизма и панисламизма среди мусульман возникли национальные и религиозные идеи. Мусульманские видные общественные деятели стали требовать от властей реформы системы духовного управления. В течение 1905-1914 гг. они составили целый ряд проектов, которые были игнорированы властями.

В заключении изложены основные итоги и выводы исследования.

SATENIK M. AVOYAN

# THE RELIGIOUS POLICY OF RUSSIAN GOVERNMENT TOWARDS THE TRANSCAUCASIAN GEORGIAN ORTHODOX, THE ARMENIAN APOSTOLIC CHURCHES AND THE MUSLIM RELIGIOUS ORGANIZATIONS (1903-1914)

The defense of the dissertation will take place at 13:00, on 13th of July, 2018, at the meeting of the Specialized Council 006 "World History, International Relations" at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History, International Relations" 07.00.02.

## SUMMARY

Today the study of the history of religious policy has not only scientific but also practical importance as well. The collapse of the Soviet Union radically changed the state and the political system of the former Soviet republics. The role of religious factor increased not only in state's internal but also external policy as well.

The thesis consists of the introduction, three chapters, the summary and the list of the sources and literature used.

The first chapter entitled **"The Georgian Exarchate within Russian Orthodox Church in 1903-1914",** introduces the dependence of Georgian Exarchate. Being a part of Artaz Sinod it was unconditionally exposed to it. But the situation was changed in 1905, when the Georgian Clergy, infected with revolutionary and liberation ideas, began openly criticize the status of Exarchate and demand for restoration of the Georgian Church autonomy. The struggle went excellently in the Pre-Conference hall and media. But after the first Russian Revolution and Niko Exzarch's murder, the struggle for the autonomy of the Georgian Church gradually faded away. During 1903-1914 the state of Exarchate in the form of Holy Synod hasn't changed.

The second chapter is entitled **"The Relations of the Russian Government and Mother See of Holy Etchmiadzin in 1903-1914"**. It points out three stages of these relationships, which were changed connected with the internal and external events. Since the late 19th century till the Russian first Revolution (1905) the autocracy run reactionary policy against the Armenian Apostolic Church and a vivid expression of it became the confiscation of Church property. But the revolution which took place in the region forced the Russian Government to pass on more careful and prudent policy (1905-1911). And since 1911 the relationships between the

Government and the Holy See were regulated. It was first of all due to the international tense, when Russia needed allies instead of enemies.

The title of the third chapter is **"The religious policy of Russian Government towards the religious organizations of South Caucasus Muslims during 1903-1914".** The chapter presents the most important features which have clearly outlined during 1903-1904. Muslim Clergy which involved in imperial government system continued to enjoy the sponsorship of the authorities. They preached among their followers loyalty to the emperor and the state. The result of it was that during the First Russian revolution the Muslim society, unlike the other nations of the Empire, remained far from Revolution. But on the other hand the most outstanding political figures of the Empire knowing the enormous power of Islam and the degree of riskiness looked for the measures to control the situation, especially since the spread of Pan-Turkism and Pan-Islamism ideas caused the dissemination of religious and national ideas among Muslims. The Muslim political figures started to demand for spiritual Governance Reform from the authorities. They have made a number of projects during 1905-1914 which, however, were ignored by the authorities.

The main findings and results of the study are summarized in the conclusion.